

**Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Աղիտուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի՝ տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար**

01.07.2020թ.

ՀՀ Սյունիքի մարզի «Աղիտուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
  2. բարձրագույն կրթությունը,
  3. ուսումնական հաստատության կառավարման իրավունքը / հավաստագիր/:
- Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
  2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
  3. հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը,
  4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը / ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ/,
  5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,
  6. աշխատանքային գրքույկի պատճենը:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 4-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-15:00-ը, բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, <<Աղիտուի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
- Մրցույթը տեղի կունենա 2020թ. օգոստոսի 13-ին, ժամը 12:00-ին, <<Աղիտուի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ գյուղ Աղիտու:
- Տեղեկությունների համար՝ զանգահարել 093341389, 077631322 հեռախոսահամարներով: